ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1960 Общественные науки

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 40-ԱՄՅԱԿԻՆ
К 40-ЛЕТИЮ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Հ. Ու. Մելիքսետյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1921—1922)

Հայ ժողովրդի արևմտյան հատվածը, երկար ժամանակ գտնվելով սուլթանական Թուրքիայի դաժան տիրապետության տակ, բազմիցս ենթարկվել է մասսայական ջարդերի ու տարագրությունների։ Թուրքական շովինիստները, հետապնդելով համաթուրքական քաղաքական որոշակի ծրագիր, սիստեմատիկ կոտորածներով, բռնագաղթեցումներով ու կրոնափոխությամբ հետևողականորեն նվազեցնում էին հայության թիվը, մինչև որ 1895—1915 թթ. արյունալից քսանամյակի ընթացքում, համատարած ջարդերով ու տարագրություններով, հայազրկեցին Արևմտյան Հայաստանը։

Հանրահայտ է, որ առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին վերջնականապես արյան հորձանքներում խեղդվեց ու կիզիչ անապատների ավազուտներում իր մահը գտավ արևմտահայության մեծամասնությունը։ Դա հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական էջերից մեկն է։

Նրանք՝ ովքեր բախտ ունեցան կենդանի մնալու, բայց մահն ապրելու և մարդկային պատմության մեջ գրեթե իր նախընթացը չունեցող գողգոթայով անցնելու, գրկվելով հայրենի օջախներից, նետվեցին աշխարհի տարբեր անկյուններ։

Միայն 1920 թ. նոյեմբերին Հայաստանում հաղթանակած Սովետական իշխանությունը փրկության ելք բացեց օտարության մեջ դեգերող բազմաշարշար սփյուռքահայ այն աշխատավորների համար, որոնք դասակարգային հրստակ տրամաբանությամբ դիմադարձ կատարեցին դեպի իրենց իսկական հանգրվանը, անվերապահորեն կանգնեցին Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերում և միաժամանակ անկեղծ ցանկություն հայտնեցին վերադառնալու ազատագրված հայրենիք։

Սակայն գաղութահայ աշխատավորների հայրենակարոտ բաղձանքներն իրականացնելու և նրանց ներգաղթը դեպի Հայաստան կազմակերպելու պատմության կամքով Սովետական իշխանությանը վիճակված դերը սահմանափակված էր տնտեսական ու քաղաքական լուրջ դժվարություններով։

Սույն հոդվածի նպատակն է լուսաբանել Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակից անմիջապես հետո, 1921—1922 թվականներին, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումները՝ դաշնակների կազմակերպած 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացման օրերին Պարսկաստան փախած ավելի քան մեկ տաս-

նյակ հազար բնակչությանը ետ վերադարձնելու, երկրում կուտակված արևմտահայ գաղթականությանը տեղավորելու և Միջագետքում տառապող հայ տարագիրների ներգաղթն իրականացնելու ուղղությամբ, որից հետո միայն հնարավոր եղավ իրականություն դարձնել նաև աշխարհով մեկ ցրված գաղութահայ տասնյակ հազարավոր աշխատավորների հայրենադարձությունը[1]։

* * *

Սովետական իշխանությունը Հայաստանում հաղթանակեց մի այնպիսի ժամանակ, երբ երկիրը գտնվում էր կործանման անդունդի եզրին։ Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը և դաշնակների ավանտյուրիստական քաղաքականությունը լիակատար քայքայման էին հասցրել Հայաստանը։ Սովետական իշխանությունն անցյալից որպես ժառանգություն ստացավ սովի մատնված բնակչությամբ ավերակ գյուղեր ու քայքայված քաղաքներ։ Հայաստանում գրեթե չկար մի անկյուն, որ ենթարկված չլիներ մասսայական ավերածությունների և բնակչությունն ապրած չլիներ գաղթի սարսափները։ Նախկին Երևանի նահանգի փոքրիկ տերիտորիան ողողված էր Արևմտյան Հայաստանից՝ Բայազետից, Վանից, Ալաշկերտից, Բիթլիսից, Մուշից, Սվազից, մինչև անգամ Կիլիկիայից ու Պարսկաստանից եկած գաղթականներով։ Թուրքիայի կողմից 1920 թ. գրավված Կարսի, Կաղզվանի ու Սուրմալուի շրջանների բնակչությունը գրեթե ամբողջությամբ գտնվում էր Սովետական Հայաստանում։ Երկրում կուտակված արևմտահայ գաղթականության թիվը անցնում էր 200 հազարից. սրանց ավելանում էր նաև տասնյակ հազարավոր որբ ու անապաստան երեխաների զանգվածը։

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ակնավոր գործիչ Գ. Կ. Օրջոնիկիձեն 1920 թ. դեկտեմբերի 1-ին Բաքվի Սովետի հանդիսավոր նիստում ելույթ ունենալով Հայաստանում սովետական կարգերի հաստատման առթիվ և նշելով Սովետական իշխանության կառուցման դժվարություններն ընդհանրապես, ասում է. «...էլ ավելի դժվար է, միլիոն անգամ ավելի դժվար է այդ իշխանությունը կառուցել այնտեղ՝ տանջված, ծվատված Հայաստանում, որը միշ է մնացել վերածվի գաղթականների ռեսպուբլիկայի»[2] (ընդգծումը մերն է — Հ. Մ.)։

Երկրում կուտակված այդ գաղթականության առկայությունը Հայաստանի վիճակը սովետական մյուս ռեսպուբլիկաների շարքում դարձնում էր բացառիկ։ Գաղթականական հարցը Սովետական Հայաստանի համար ամենադժվար լուծելի հարցերից մեկն էր, որովհետև դեռևս չտեղավորած երկրում գտնվողներին, արդեն սկսվել էր նոր ներգաղթողների հոսանքը տարբեր վայրերից, մի հանգամանք, որն ավելի էր բարդացնում դրությունը։ Չնայած իր տնտեսական ու քաղաքական դժվարին կացությանը, ինչպես միշտ, այս անգամ ևս, հայ ժո-

[1] Այդ հարցերին մասնակիորեն անդրադարձել են Հ. Մ. Էլչիբեկյանը՝ «Վասպուրականի հայերը Միջագետքում և նրանց վերադարձը Սովետական Հայաստան» (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր». 1940. № 2, էջ 17—20) հոդվածում, Ա. Մ. Հակոբյանը՝ «Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում» (Երևան. 1955, էջ 313—317) մենագրության մեջ և Ս. Վ. Խարմանդարյանը՝ „Армянская ССР в первый год новой экономической политики". (Ереван. 1955, стр. 144—151) ուսումնասիրության մեջ։

[2] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 34։

զովրդին եղբայրական օգնության ձեռք մեկնեց ռուս ժողովուրդը։ Ոչ լրիվ տվյալներով, հենց միայն Հյուսիսային Կովկասում կուտակվել էին ավելի քան 130 հազար հայ գաղթականներ, որոնց նյութական հսկայական աջակցություն էր ցույց տալիս Սովետական Ռուսաստանը՝ Կենտրէվակի Կովկասյան հատուկ լիազորության միջոցով, որը գործում էր 1920 թ. սեպտեմբերից։ Վրաստանում և Ադրբեջանում գտնվող հայ գաղթականներին, հնարավորության սահմաններում, ապաստան էին տվել Սովետական իշխանության տեղական օրգանները[3]։ Առանց եղբայրական այս հոգատարության, Սովետական Հայաստանը ի վիճակի չէր լինի աստիճանաբար լուծելու երկրում գտնվող գաղթականական բազմահազարանոց մասսային բնակեցնելու, հողով բավարարելու և այլ հարցերը։

Սակայն իր գոյության առաջին ամիսներին նորաստեղծ Սովետական իշխանությունը դեռևս թույլ աշխատանք էր տանում արևմտահայ գաղթականության շրջանում, որովհետև չկային հարկ եղած նյութական միջոցներ, պակասում էին համապատասխան կադրերը և չկար աշխատանքի կազմակերպման անհրաժեշտ փորձ։ Այդ հանգամանքն այնքան զգալի էր, որ Ալագյազի շրջանի գյուղերում վերաբնակվող մշեցիներն ու սասունցիները 1921 թ. սկզբներին մի խնդրագրով դիմում են ՀՍԽՀ Հեղկոմին այն կապակցությամբ, որ այդ գյուղերում վատ է կազմակերպված աշխատանքը և պահանջ են առաջադրում, որպեսզի իրենց մոտ նույնպես կազմակերպվեն հեղկոմներ, ուղարկվեն պրոպագանդիստներ, գրականություն և այլն[4]։ Հենց դաշնակցության կազմակերպած փետրվարյան ավանտյուրայի առաջացման գործում ոչ երկրորդական դեր խաղաց արևմտահայ այն գաղթականությունը, որը դեռևս չէր հիմնավորվել երկրում և մասամբ դուրս էր մնացել Սովետական իշխանության ուշադրության ոլորտից։ Այդ հանգամանքը ճարպկորեն օգտագործվեց դաշնակցության կողմից։ Դաշնակների կազմակերպած փետրվարյան ավանտյուրան, որը քաղաքացիական կռվի մեջ քաշեց առանց այն էլ քայքայված երկիրը, զգալի վնաս հասցրեց նաև արևմտահայ գաղթականության հարցի շուտափույթ լուծմանը։ Սովետական կառավարությունն ստիպված էր ժամանակավորապես ձեռնամուխ լինել այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտեի» տխրահռչակ դիկտատուրայի լիկվիդացման օրերին դաշնակների տարածած սուտ լուրերի, ստոր պրովոկացիաների ու սպառնալիքների հետևանքով Երևանից և այլ վայրերից Պարսկաստան անցած փախստականության վերադարձի կազմակերպմանը։

Դաշնակների ագիտացիային ու սպառնալիքներին զոհ գնացած փախստականների մոլորված մասսան սկզբում մտադիր էր մնալ Զանգեզուրում, բայց այնտեղ ընկնելով անողոք սովի ու թշվառությունների հորձանուտը՝ խուճապահար շարժվում է դեպի Պարսկաստան։ Յոթ-ութ հազար հոգի Ղարադաղի վրայով մեկնում են Թավրիզ, մի մասն էլ՝ կիսամերկ ու անոթի, մնում է Պարսկաստանի սահմանի մոտ, Արաքսի ափին, ցերեկվա արևի ու գիշերվա ցրտի տակ։ Զանազան ավազակախմբեր կողոպտում էին նրանց մինչև վերջին շապիկը, շատերը խեղդվել էին գետն անցնելիս կամ սովամահ եղել։ Թավրիզ

[3] Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ (հետագայում կրճատ նշվում է՝ ՀՍՍՌ ՀԱԿՊԱ), ֆ. 40/113, ց. 3, գ. 21, թ. 19։

[4] Տե՛ս Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925), Երևան, 1955, էջ 70։

[5] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 4/114, գ. 5, թ. 3։

մեկնածները կարճ ժամանակում վերջնականապես համոզվելով իրենց խարվածության մեջ, արդեն մայիսի սկզբներին սկսում են ետ վերադառնալ Ջուլֆա և այնտեղից խնդրում Սովետական Հայաստանի կառավարությունից՝ հնարավորություն տալ իրենց վերադառնալու հայրենի օջախները և զբաղվելու խաղաղ շինարարական աշխատանքներով[6]։ 1921 թ. ապրիլի 8-ին, Երևանում Սովետական իշխանություններ վերահաստատվելուց վեց օր հետո, Հայհեղկոմը քննարկեց փախստականության հարցը և որոշեց հանձնարարել Հեղկոմի նախագահությանը մշակել ներման մասին դեկրետի նախագիծ[7]։ Հեղկոմի ապրիլի 10-ի նիստում հաստատվեց նախագիծը և որոշվեց ներման դեկրետը հրապարակել մամուլում։ Այդ դեկրետով շինարար աշխատանքի էին հրավիրվում բոլոր նրանք, ովքեր կուրորեն նետվել էին Սովետական իշխանության դեմ մղվող պայքարի մեջ։ Դեկրետում նշվում էր, որ ՀՍԽՀ Ռազմա-հեղափոխական Կոմիտեն որպես երկրի աշխատավոր մասսաների կառավարություն, չի կարող լինել ոխակալ, չի կարող ղեկավարվել վրեժի զգացումով։ Նա անողոք է գործող հակահեղափոխության նկատմամբ, նա անխնա է այն չարագործ խմբակի վերաբերմամբ, որը յուր հանցավոր և պրովոկացիոն ագիտացիայով, մահվան վախի ու սպառնալիքի տակ հանդգնեց ստիպել անգիտակից ու անմեղ մասսային զենք բարձրացնելու բանվորա-գյուղացիական Սովետական իշխանության դեմ։ Հեղկոմը հանդիսավորապես մոռացության է տալիս հանցանքը բոլոր նրանց, որոնք Հայաստանի աշխատավորության հավիտենական թշնամիների ոճրագործ միտումների զոհն են դարձել և գաղթականներին, աշխատավոր ինտելիգենցիային, որոնք այս կամ այն ձևով մասնակցել և մասնակցում են հակահեղափոխական շարժման, հրավիրում է շինարար աշխատանքի[8]։

1921 թ. ապրիլի 24-ին հրապարակվում է Հեղկոմի նոր դեկրետը՝ ընդհանուր ներման մասին, որի համաձայն մեծահոգաբար ներումն էր շնորհվում ավանտյուրային մասնակցած բոլոր խավերին[9]։

Սովետական իշխանության հրապարակած այդ դեկրետները լայն արձագանք գտան ինչպես երկրում կուտակված գաղթականության, այնպես էլ արտասահմանում ապաստան գտած մոլորված ու խաբված փախստականության շրջանում։ Ահա դրա բազմաթիվ վկայություններից մեկը. 1921 թ. ապրիլի 26-ին «Կոմունիստ» թերթը «Ներման դեկրետի արձագանքը» խորագրի տակ, «Անկատեգոր քաղաքացի Արտակ Պալուցի» ստորագրությամբ, հրապարակում է հետևյալ նամակը. «Քայլ առ քայլ երկչոտությամբ մոտիկ է գալիս այն թյուրիմաց շերտը, բուն գաղթականը։ Նա կարդաց, լսեց և զգաստացած ներման դեկրետներով, կամացուկ ձայնով ողջունում է կենտրոնական կուսակցության Կարմիր Ղեկին։ Եվ ահա փարումն ու փարատումն միշտ իրենների, դու ես լիուլի։ Թերթի խմբագրությունն իր կողմից գրում է. «Մեծ բավականությամբ տեղ ենք տալիս տաճկահայ «անկատեգոր քաղաքացու» այս անպաճույճ, բայց սրտարուխ տողերին՝ առանց որևէ փոփոխության։ Նման «անկատեգոր քաղաքացիների» թիվը շատ է։ Եվ «կենտրոնական կուսակցության Կարմիր Ղեկը» նորից կոչ է անում բոլոր այնիվ անկատեգորներին՝ առանց երկչոտության,

---

[6] «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, Երևան, 28 մայիսի, 1921, № 94։
[7] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, 43, թ. 2։
[8] «Կոմունիստ», օրաթերթ, Երևան, 12 ապրիլի, 1921, № 63։
[9] Տե՛ս «Կոմունիստ», 24 ապրիլի, 1921, № 72։

բաց ճակատով և անսպառ եռանդով լծվել մայրենի երկրի վերաշինման աշխատանքին։ Եվ այսուհետև մեր ավեր հայրենիքում թող լինի բանվորա-գյուղացիական գործի աշխատողների կատեգորիա»։

Ներման դեկրետների ազդեցության տակ, անհապաղ երկիր վերադառնալու որոշումներ են կայացնում Թավրիզում կուտակված փախստականները, արևմտահայ գաղթականներն ու զինվորները[10]։

1921 թ. մայիսի 27-ին Ժողկոմխորհի նախագահությունը քննարկում է Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսար Պողոս Մակինցյանի զեկուցումը՝ «գաղթականների խնդրի մասին» և կոնկրետ միջոցառումներ մշակում ամեն կերպ նրանց օգնելու համար[11]։ Մայիսի 31-ին Ժողկոմխորհի նախագահության նիստում լսվում է «Թավրիզի գաղթականների խնդիրը» և որոշվում է նրանց փոխադրությունն արագացնելու և կազմակերպված իրականացնելու նպատակով Ջուլֆա և Պարսկաստան գործուղել կառավարական հատուկ հանձնաժողով՝ Գրիգոր Վարդանյանի գլխավորությամբ։ Միաժամանակ հեռագրվում է երկաթուղային վարչությանը՝ փախստականներին Ջուլֆայից Հայաստան տեղափոխելու համար վագոններ տրամադրելու մասին[12]։

1921 թ. հունիսի 1-ին Գր. Վարդանյանը իր չորս գործակիցների հետ միասին մեկնում է Ջուլֆա՝ ղեկավարելու փախստականության վերադարձը, որն արդեն սկսվել էր մայիսի 26-ից, երբ պարսկա-սովետական սահմանն էր հասել Թավրիզից եկողների 300 հոգուց բաղկացած առաջին խումբը[13]։ Մինչև 1921 թ. հունիսի կեսերը կարողացան իրենց հարազատ օջախները վերադառնալ ավելի քան 3250 մարդ[14]։

Փախստականների վերադարձը ժամանակավորապես խանգարվեց Զանգեզուրում ծվարած դաշնակցության մնացորդների ձեռնարկած վերջին ավանտյուրայի հետևանքով։ 1921 թ. հունիսի 16-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ ու ռազմժողկոմ Ալ. Մյասնիկյանի և Երևանի ռազմական խմբավորման հրամանատար Մ. Վելիկանովի ստորագրությամբ հեռագիր է ուղարկվում Ջուլֆա՝ Ժողկոմխորհի գաղթականական գործերի հատուկ լիազոր Գր. Վարդանյանին, մինչև նժդեհյան բանդայի լիկվիդացումը գաղթականության ընդունումը դադարեցնելու մասին[15]։

Զանգեզուրի ազատագրումից հետո, օգոստոսի կեսերին, նորից վերսկսվում է փախստականների վերադարձը և կարճ ժամանակամիջոցում Հայաստան են ճանապարհվում ավելի քան 2500 մարդ[16]։

Երկրից վտարված ու Պարսկաստանում բուն դրած դաշնակները ամեն կերպ փորձում էին խանգարել փախստականության Հայաստան վերադառնալուն և դիմում են անգամ պրովոկացիաների ու սպառնալիքների։ 1921 թ. օգոստոսի 21-ին Պարսկաստանից մի գաղթական մերկացնելով դաշնակների հակասովետական գործունեությունը, գրում էր ՀՍԽՀ Ժողկոմխորհին, որ նրանք ամեն կերպ խոչընդոտում են գաղթականության երկիր վերադառնալուն և

[10] «Խորհրդային Հայաստան», 23 օգոստոսի, 1921, № 154։
[11] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 114, գ. 96, թ. 26։
[12] Նույն տեղում։
[13] Նույն տեղում, թ. 26 և 173—181։
[14] Նույն տեղում, 173—181։
[15] Նույն տեղում, թ. 84։
[16] Նույն տեղում, թ. 193—181։

ասում են, թե «Հայաստանում սով է, բանտերը լցված են, բոլշևիկները սպանում են վերադարձողներին» և այլն, «ավելի լավ է այստեղ մեռնել, քան թե գնալ Հայաստան»։ Նույն նամակի հեղինակը նշում էր, որ չնայած այդ բոլոր զրպարտություններին, ամբողջ գաղթականությունը ցանկանում է գալ հայրենիք[17]։

Սովետական կառավարության ձեռք առած միջոցառումների շնորհիվ, Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ակտիվ գործիչ, ՀՍԽՀ ժողկոմխորհի առաջին նախագահ Ալ. Մյասնիկյանի և Արտաքին Գործերի ժողկոմ Ասք. Մռավյանի ամենօրյա ուշադրության շնորհիվ, փախստականության վերադարձը իրականացվում էր կազմակերպված ձևով։

Դեռևս 1921 թ. հուլիսի կեսերին ՀՍԽՀ ժողկոմխորհի դեկրետով վերացվել էր Ներքին Գործերի ժողկոմատի կենտրէվակ բաժինը և ստեղծվել էր ժողկոմխորհին առընթեր Գաղթականական Գործերի Գլխավոր Վարչություն (Գաղթվար), որը ուներ ժողովրդական կոմիսարիատներին հավասար իրավունքներ[18]։ Գաղթականական Գործերի Գլխավոր վարչության նախագահ է նշանակվում Սոցապժողկոմ Նարիման Տեր-Ղազարյանը, նախագահի տեղակալ՝ Հովհ. Դուրգերյանը (Օ. Դուրգարյան), անդամներ՝ Ա. Շահգելդյանը, Թունունցը և Քալանթարը[19]։ Գաղթականական Գործերի Վարչությունը մեծ դեր խաղաց ներգաղթի կազմակերպման և գաղթականության տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ և 1921 թ. վերջերին, երբ արդեն Սովետական կառավարության ձեռք առած կտրուկ միջոցառումների շնորհիվ որոշ չափով նորմալ հունի մեջ էր դրվել գաղթականական հարցի լուծումը, այն որպես իր խնդիրները կատարած մի օրգան, լիկվիդացվեց։ Նրա ֆունկցիաների մի մասը հանձնվեց Ներքգործժողկոմատում կազմակերպված գաղթականական բաժնին, մի մասն էլ՝ Սոցապժողկոմատին[20]։

Սովետական կառավարության գործադրած ջանքերի շնորհիվ, մինչև 1922 թ. գարունը հաջողվեց հայրենի օջախները վերադարձնել Երևանից, Զանգեզուրից և Նախիջևանից Պարսկաստան անցած համարյա թե բոլոր փախստականներին, որոնք խաբվել էին դաշնակների պրովոկացիաների հետևանքով, կամ ենթարկվել նրանց սպառնալիքներին։

Փախստականությանը հայրենիք վերադարձնելու գործում մեծ օգնություն էր ցույց տալիս Սովետական Ռուսաստանը։ Պարսկաստանում ՌՍՖՍՌ լիազոր ներկայացուցչության և հյուպատոսությունների, իսկ 1921 թ. նոյեմբերից ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության կողմից, գաղթականներին տրվում էր դրամական նպաստ ու պարեն ճանապարհի համար և պարսկա-սովետական սահմանն անցնելու անցաթղթեր։ Վերադարձողներին անհրաժեշտ բժշկական օգնություն կազմակերպելու նպատակով Երևանից Ջուլֆա էին ուղարկվել բժիշկներ և դեղորայք[21]։

Միաժամանակ Հայաստան էին վերադառնում դաշնակների ազգամիջյան կռիվների պատճառով երկրից հեռացած տասնյակ հազարավոր ադրբեջանցի,

---

[17] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 99, թ. 12—14։
[18] Նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 50, թ. 26 և 34.
[19] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 17, թ. 84։
[20] Նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, թ. 37։
[21] Նույն տեղում, ֆ. 114, գ. 96, թ. 48։

ռուս և այլազգի աշխատավորները, որոնց նույնպես նյութական ու բարոյական լայն աջակցություն էր ցույց տալիս Սովետական կառավարությունը[22]։

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 15-ին Հայհեղկոմը վերացնում է երկրից հեռացած մահմեդական բնակչության ունեցվածքը բռնագրավելու վերաբերյալ դաշնակցական կառավարության որոշումը և հրապարակում է հատուկ դեկլարացիա ուղղված մահմեդական գաղթականությանը, որտեղ հայտարարվում էր, որ նրանք բոլորն էլ կարող են ազատորեն վերադառնալ նախկին տեղերը և տեր կանգնել իրենց ունեցվածքին[23]։ Այս և նման այլ միջոցառումների շնորհիվ, Հայաստանից հարկադրաբար հեռացած մահմեդական բնակչությունը վստահ կերպով վերադարձավ իր նախկին բնակավայրերը և լծվեց շինարար աշխատանքի։

*

Դաշնակների փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո, Սովետական կառավարությունը լուրջ աշխատանք ծավալեց նաև երկրում գտնվող արևմտահայության շրջանում։

Նախ և առաջ Հայաստանի և Վրաստանի արևմտահայերի մեջ կազմակերպական աշխատանք տանելու նպատակով, Ժողկոմխորհի նախագահության որոշմամբ հատկացվեց 30 միլիոն ռուբլի[24]։

Հրավիրվեցին արևմտահայ գաղթականների բազմամարդ ժողովներ, որոնք մեծ նշանակություն ունեցան նրանց վերաբերմունքի մեջ բեկում առաջացնելու իմաստով։ 1921 թ. մայիսի 21—23-ը Թալինում տեղի է ունենում Էջմիածնի գավառի արևմտահայերի համագումարը, որտեղ լսվում են Հայհեղկոմի անդամ Դրաստամատ Տեր-Սիմոնյանի, Էջմիածնի Հեղկոմի նախագահ Արամ Շահգելդյանի, Էջմիածնի գավառի գաղթականության կոմիսար Գրիգոր Վարդանյանի և ուրիշների զեկուցումները գաղթականությանը հուզող խնդիրների և Սովետական իշխանության ձեռնարկումների մասին։ Համագումարը լիովին հավանություն է տալիս Սովետական կառավարության վարած քաղաքականությանը և կոչ է անում արևմտահայ բոլոր գաղթականներին կապվել հողի հետ և լծվել երկրում ծավալված վերաշինական աշխատանքներին, որովհետև «Միայն ՀՍԽ Հանրապետության հարատև գոյության ու ամրապնդման միջոցով Հայաստանի աշխատավորությունը կարող է իր իղձերն ու փափագները իրագործված տեսնել»[25]։

Նման բազմամարդ ժողովներ են ունենում նաև Ղամարլուի (այժմ Արտաշատ), Ղուրդուղուլիի (այժմ Հոկտեմբերյան), Ալեքսանդրապոլի (այժմ Լենինական) և այլ շրջանների արևմտահայ աշխատավորները։ Այդ ժողովներում որոշվում է հրավիրել Սովետական Հայաստանի տերիտորիայում ապրող արևմտահայ գաղթականների համագումար և մշակել ընդհանուր վերաբերմունք Սովետական իշխանության նկատմամբ[26]։ Շուտով Թիֆլիսում սկսվում է հրատարակվել արևմտահայ աշխատավորների օրգան «Կարմիր օրեր» թերթը[27]։

[22] Նույն տեղում, գ. 5, թ. 20։
[23] Նույն տեղում, գ. 17, թ. 9։
[24] Նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, թ. 38։
[25] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 5, թ. 2, տե՛ս նաև ֆ. 40/113, ց. 3, գ. 22, թ. 101—113։
[26] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 5, թ. 25—26։
[27] Նույն տեղում, թ. 43։

Սովետական իշխանության պաշտպանությամբ հանդես են գալիս նաև Թիֆլիսում կուտակված արևմտահայ գաղթականները։ Նրանց առաջին ժողովը, որը տեղի ունեցավ 1921 թ. մարտի 27-ին, վերագնահատելով անցյալի դիրքորոշումը, մի կոչով դիմեց արևմտահայ բոլոր աշխատավորներին։ Այնտեղ ասված էր. «...Բավ է, որքան արևմտահայ աշխատավորական մասսաներս տասնյակ տարիներ գործիք ու խաղալիք եղանք դաշնակցություն կոչված ավանտյուրիստական կուսակցության միջոցով՝ եվրոպական գիշատիչ իմպերիալիստների ձեռքին. հերիք է, ինչքան արյուն ու ավյուն զոհաբերեցինք այդ լպիրշ, ստորաքարշ, խաբեբա դիպլոմատների գրպանները էլ ավելի պարարտացնելու համար։ ...Այո, մենք երեկ կույր էինք մտքով և մեր կուրությունը անխղճորեն շահագործեցին իմպերիալիզմի տխրահռչակ լակեյները՝ մեծ ու պստիկ Անտանտը և նրանց դոներին մշտապես քարշ եկող ազգադավ դաշնակցությունը։

...Մեզ համար այլևս պարզ է ամեն ինչ. մենք միանգամ ընդմիշտ մեր թիկունքն ենք դարձնում Հայաստանի աշխատավորության միակ թշնամիներին՝ իմպերիալիստական աշխարհին, դաշնակցական և մնացած բոլոր ազգայնական շովեն ու ոճրագործ կուսակցություններին»[28]։

Այնուհետև նշելով, որ ճնշված ու տառապած հայ աշխատավորության փրկությունը կախված է Սովետական իշխանության ամրապնդումից, կոչի հեղինակները արևմտահայ գաղթականությանը հրավիրում էին համախմբվելու Սովետական իշխանության շուրջը և լծվելու երկրի վերաշինության վեհ գործին։

1921 թ. օգոստոսի 21-ին կայացավ Թիֆլիսաբնակ արևմտահայ աշխատավորության անպարտիական կոնֆերանսը, որը քննարկեց արևմտահայ աշխատավորության օրիենտացիայի, Սովետական Հայաստանի վերաշինության, արտասահմանյան հայ գաղութների և ընդհանրապես գաղթականության հարցերը։ Կոնֆերանսն ընտրեց 15 հոգուց բաղկացած Թիֆլիսի Արևմտահայ բյուրո, որը կոչով դիմեց արտասահմանի հայ գաղութներին և նկարագրելով Սովետական Հայաստանի կառավարության ջանքերը արևմտահայության տեղավորման և ամեն կերպ նրանց օգնելու ուղղությամբ, կոչ արեց նպաստել երկրի վերաշինմանը, չհավատալ զրպարտություններին, այլ գալ երկիր, տեսնել և համոզվել[29]։

Իսկ տեսնելու և համոզվելու շատ բան կար. Սովետական իշխանությունը կարճ ժամանակամիջոցում գործով ցույց տվեց, որ նա իսկապես անկեղծորեն մտածում է գաղթականության վիճակի բարելավման մասին։ 1921 թ. գարնանից սկսած ՀՍԽՀ Հողագործության ժողովրդական Կոմիսարիատը հող է տրամադրում Հայաստանի սահմաններում գտնվող արևմտահայ գաղթականներին, տեղացիներին հավասար չափով[30]։

Գաղթականության կարիքները հոգալու և նրանց համար պարենի ու սերմացուի հատուկ ֆոնդ հիմնելու նպատակով, 1921 թ. օգոստոսի 21-ին ժողկոմխորհը որոշում է կայացնում Պարենավորման ժողկոմատի ընթացիկ աղբյուրներից պարբերաբար հատկացնել հացահատիկ։ Այդ որոշման համաձայն բոլոր նախկին հողատերերը, որոնք անմիջականորեն իրենք չէին մշակում

---

[28] «Կոմունիստ», 23 ապրիլի, 1921, № 71։

[29] ՀՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 4/114, գ. 5, թ. 37—39։

[30] Նույն տեղում, թ. 20։

իրենց հողերը, այլ զանազան պայմաններով՝ վարձակալությամբ և այլն, տալիս էին սակավահող գյուղացիներին, զրկվում էին բերքից և այն հատկացվում էր գաղթականական ֆոնդին[31]։

Ժողկոմխորհի մի այլ դեկրետով (22 հոկտեմբերի 1921 թ.) հաստատվում է 15 միլիարդ ռուբլի միանվագ և արտակարգ տուրք՝ Հայաստանի սահմաններում գտնվող հարյուր հազարավոր գաղթականներին նյութական ծանր կացությունից դուրս բերելու համար։ Գաղթականական տուրքը գանձվում էր ազգաբնակչության միայն ունևոր խավերից. այն անձնավորությունները, որոնց գոյությունը պաշտպանելու կամ եկամտի միակ միջոցը աշխատավարձն էր, ազատվում էին տուրքը վճարելուց[32]։ Բացի այս ձեռնարկումները, գաղթականներին արտոնյալ պայմաններով տրամադրվում էին շինարարական և գույքավորման երկարատև վարկեր, բնակարաններ, գյուղատնտեսական գործիքներ, անասուններ և այլն։

1922 թ. գարնանից Հողժողկոմատը ձեռնարկում է ռեսպուբլիկայում հողաշինարարական ծավալուն աշխատանքներ, միաժամանակ կատարում երկրում կուտակված գաղթականության հաշվառում։ Այդ միջոցառումների շնորհիվ մասամբ հաջողվում է պարզել հողազուրկ գաղթականների քանակն ու կարիքները և հնարավորության սահմաններում նրանց բավարարություն տալ։ Ներքգործժողկոմատի գաղթականական բաժնի կողմից հաշվառման ենթարկված 128.634 գյուղական գաղթական բնակչությունից առ 1-ը փետրվարի 1923 թ.[33] հողով բավարարված էին 49.000 մարդ, իսկ 79.634 մարդ դեռևս մնում էին հողազուրկ վիճակում[34]։ Այստեղ չեն ընդգրկված Երևան ու Լենինական քաղաքների և Զանգեզուրի, Դարալագյազի ու Մեղրու գավառների գաղթականները։ Համաձայն Հողժողկոմատի տվյալների, այդ նույն ժամանակ հողով բավարարված էին 64.000 գաղթականներ[35]։ Այս տվյալները միայն մոտավոր գաղափար կարող են տալ ինչպես գաղթականության ընդհանուր թվի, այնպես էլ նրանց հողով ապահովվածության մասին, քանի որ զանազան պատճառների հետևանքով նրա հաշվառման գործը երբեք էլ չհաջողվեց հասցնել բարվոք վիճակի։ Բացի այդ, այստեղ ցույց չեն տրված հողով բավարարություն ստացած այլազգի գաղթականները, որոնք նույնպես երկրում մեծ թիվ էին կազմում։ Հայաստանի նման սակավահող մի երկրում խիստ դժվար էր գաղթականների հարյուր հազարավոր մասսային բավարարել հողով, գյուղատնտեսական գործիքներով, սերմացուով, անասուններով և այլն։ Գաղթականներին սակավահող գավառներից դեպի համեմատաբար հողառատ շրջանները տեղափոխելու համար անհրաժեշտ էին նյութական ու փոխադրական լայն հնարավորություններ, մի բան, որից գրեթե զուրկ էր նորաստեղծ Սովետական իշխանությունը։ Այնուամենայնիվ, ճիգերի մեծ լարումով, Սովետական կառավարությունը կատարում էր այդ աշխատանքները։ Այսպես, 1922 թ. Ղարաքիլիսայի շրջանից Բասարգեչար են տեղափոխվում 2757 շունչ գաղթականներ, նոր վայրերում ստանում հողամաս, բնակարաններ և երկարատև վարկ՝ լծկաններ ու

[31] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 5, թ. 59։

[32] Նույն տեղում, թ. 60։

[33] Նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 421, թ. 55—56։

[34] Նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1576, թ. 13—15։

[35] Տես «Խորհրդային Հայաստան—1920—1925», ժողովածու, Երևան, 1926, էջ 109։

գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու համար[36]։ Ներքին այս փոխադրությունները ավելի մեծ մասշտաբներով շարունակվեցին հաջորդ տարիներին։

* *

Երկրում կուտակված գաղթականությանը բնակեցնելուն, հողով և այլ միջոցներով բավարարելուն զուգընթաց, Սովետական կառավարությունը իր գոյության առաջին իսկ օրերից հսկայական աշխատանք է կատարել նաև արտասահմանում դեգերող հայ աշխատավորներին հայրենիք վերադարձնելու ուղղությամբ։ Գաղութահայ աշխատավորական մասսաները գոտեպնդիչ լուրեր ստանալով երկրում տեղի ունեցող արմատական վերափոխումների մասին, իրենց հայացքները աներկբայելիորեն հառում էին դեպի Սովետական Հայաստան։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը և Սովետական կառավարությունը բազմաթիվ դիմումներ էին ստանում սիյուռքահայ աշխատավորներից՝ իրենց Հայաստան գալու հնարավորություն ընձեռելու խնդրանքով։ Սովետական կառավարությունը չէր կարող անտարբեր մնալ դրանց նկատմամբ։ Շատ դիմումներ էին ստացվում հատկապես Միջագետքի հայ գաղթականներից, որոնք գտնվում էին դժնդակ պայմաններում։ Դրանք հիմնականում Վասպուրականի հայերն էին (մոտ 17 հազար մարդ), որոնք թուրքերի ուխտադրուժ հարձակման հետևանքով, 1918 թ. վաղ գարնանը մասսայաբար փախչում են դեպի Անդրկովկաս, սակայն Վան-Բզդիր ճանապարհը թուրքական բանակի կողմից փակվելուց հետո, ստիպված են լինում անասելի զրկանքներով ու բազմաթիվ զոհեր տալով, երկարատև ճանապարհ կտրել դեպի Պարսկաստան, հույս ունենալով այնտեղից անցնել Անդրկովկաս։ Սակայն նրանց Պարսկաստանից Անդրկովկաս փոխադրվելու մտադրությունը ևս չի հաջողվում իրականացնել, քանի որ թուրքական զորքերը մտել էին Պարսկաստան և կտրել ճանապարհը դեպի Անդրկովկաս։ Վասպուրականցիները և նրանց միացած Խոյի, Սալմաստի, Ուրմիայի հայերն ու նեստորական ասորիները ստիպված շարժվում են դեպի Հարավային Պարսկաստան։

1918 թ. հունիսի վերջերին Պարսկաստանում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությունը գաղթականների այդ մասսային իր նպատակներին ծառայեցնելու համար, վերցնում է իր «հովանավորության» տակ։ Օգոստոսի սկզբներին նահանջող գաղթականությունը հասնում է Համադան, բայց անգլիացիները նրանց արգելում են մտնել քաղաք[37]։ Անգլիացիները համոզում են գաղթականությանը, որ ամենահարմար ելքն այն է, որ տեղավորվեն Միջագետքում, մի առժամանակ մնան այնտեղ, խոստանալով իրենց սեփական նավերով շուտով նրանց տեղափոխել Հայաստան[38]։ Միջագետքի սահմաններից ներս մտնելուց հետո անգլիացիք անմիջապես զինաթափում են հայ-ասորական 6—7 հազարանոց զինված ջոկատը, բացի նրանցից, որոնք ցանկություն են հայտնում ընդգրկվել անգլիական զորքերի կազմի մեջ։ Անգլիական իշխանությունները գաղթականներին հավատացնում էին, թե իբր դա կատարվում է գաղթականների մեջ կարգապահություն պահպանելու և նրանց պատահական

[36] Նույն տեղում, էջ 69։
[37] ՀՍՍՌ ՀԱԿԳԱ, ֆ. 114, գ. 267, թ. 119—121։
[38] «Խորհրդային Հայաստան», 25 սեպտեմբերի, 1924, № 219։

բանդիտներից պաշտպանելու համար։ Այդպես ստեղծվում են երկու-երեք հայ-ասորական գումարտակներ և ուղարկվում Զենջան՝ օգնելու թուրքերի դեմ կռվող անգլիական զորքերին[39]։ Գաղթականությունը կարճ ժամանակամիջոցում համոզվում է, որ անգլիական գաղութարարները ծրագրել են հայերից և ասորիներից ստեղծել զինված ուժեր ու նրանց օգտագործել արաբական աշխարհում իրենց բռնակալ թաթն ամուր պահելու և միաժամանակ Հարավային Պարսկաստանի ու Միջագետքի նավթահանքերը անձեռնմխելի դարձնելու գործում։

Հայ գաղթականությունը ծառացավ այդ ստոր խաբեության դեմ և պահանջեց իրագործել Հայաստան փոխադրելու մասին կատարած խոստումները։ Անգլիացիք զգալով գաղթականության ըմբոստացումը, սկսեցին ձերբակալությունների ու պատիժների ենթարկել առավել աչքի ընկնող տարրերին, իսկ հիմնական մասսային զինված պահակախմբերի հսկողության տակ փոխադրել Բաղդատի մոտ, որտեղ նրանց տեղավորում են վրանների տակ, հատուկ ճամբարներում (քեմբերում)։

Ռեալ վիճակագրության չգոյության հետևանքով, դժվար է որոշակիորեն ասել, թե որքան հայեր հասան Միջագետք։ Ըստ վկայությունների, 1918 թ. աշնանը Համադանում, Քիրմանշահում և Բաքուբայում հաշվվում էին ավելի քան 16 հազար հայեր, որից միայն Բաքուբայում՝ 15 հազար (այլ աղբյուրների համաձայն 1919 թ. Բաքուբայում կային 10 հազար վասպուրականցիներ, 5—6 հազար ուրմիացիներ ու խոյեցիներ և առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Միջագետք անցած 3 հազար արևմտահայեր, այսպիսով ընդամենը 18—19 հազար հայ)[40]։

Այսպիսով, Վասպուրականի, Ուրմիայի, Սալմաստի և Խոյի տարագիր հայության մեծ մասը գտնվում էր Բաղդատից ոչ հեռու՝ Բաքուբա ավանում։ Ճամբարում ապրողներին անգլիացիները բաց էին թողնում աննշան քանակությամբ անորակ մթերքներ, որով մի կերպ իրենց գոյությունն էին քարշ տալիս գաղթականները։ Քեմբերը շրջապատված էին փշալարերով և գտնվում էին հնդիկ զինվորների խիստ հսկողության տակ։ Հայերին արգելվում էր դուրս գալ ճամբարից և աշխատանք որոնել Բաղդատում կամ մի այլ վայրում։ Գաղտնի Բաղդատ կամ Բասրա աշխատանք փնտրելու փախչողներին անգլիացիները հետապնդում էին, գտնում և ենթարկում մեկամսյա բանտարկության ու կատարել տալիս տաժանակիր աշխատանքներ, իսկ եթե չէր հաջողվում նրանց բռնել, այդ դեպքում փախածի ընտանիքին էին վտարում քեմբից դեպի անապատ։ Սովն ու համաճարակները օրական տասնյակ զոհեր էին խլում անապատի կիզիչ արևի տակ տառապող վրանաբնակներից։

Գաղթականներին տրվող նպաստի դիմաց տղամարդկանց ձրի աշխատեցնում էին կառուցվող երկաթուղու շինարարության վրա, ուր նրանք ենթակա էին անգլիական սպաների սանձարձակ կամայականություններին։ Անգլիական իշխանությունները, գաղթականության մի մասին 1920 թ. աշնանը փոխադրում են Բասրայի նահանգի Նահրէլօմար գետափնյա ավանը՝ տեղի նավթահանքերում և ստրատեգիական նշանակություն ունեցող շինարարական օբ-

[39] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68/200, գ. 125, թ. 9 և 16։
[40] ՀՍՍՌ ՀՌԿՊԱ, ֆ. 114, գ. 267, թ. 119—121։

յեկտներում աշխատեցնելու նպատակով, ուր ավելի է վատթարանում առանց այն էլ թշվառության մեջ գտնվող հայ տարագիրների վիճակը։ Անգլիական գաղութարարները արաբական աշխարհում իրենց գիրքերը ամրապնդելու և կայուն հենարան ստեղծելու համար ձգտում էին քրիստոնյա հայերին և ասորիներին կապել հողի հետ, հակադրություն ստեղծել վերջիններիս և արաբների միջև։ Այդ առթիվ ու քեմալական Թուրքիայի հրահրումների հետևանքով, տեղական արաբները մի քանի անգամ զինված հարձակումներ են գործում հայ գաղթականների ճամբարների վրա և վնասներ պատճառում նրանց։ Այսպիսի դժվարին իրադրությունից ելք գտնելու համար, Միջագետքի հայությունը փորձում էր կապ ստեղծել Բաղդատի, Պոլսի և Երևանի բարեգործական ու ազգային հիմնարկությունների հետ։ 1919 թ. ամռանը նրանց հաջողվում է կապվել էջմիածնի հետ և տեղեկացնել իրենց թշվառ կացության մասին։ 1919 թ հուլիսի 9-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվանը հայտնում է դաշնակցական կառավարությանը, որ Բաղդատի Հայոց Առաջնորդական փոխանորդի ապրիլի 27-ի գրության համաձայն «Միջագետքում այժմ գտնվում են 25 հազար հայ փախստականներ, որոնք ապրում են շատ դառն պայմանների մեջ և եթե նոցա դեպի իրենց հայրենիք գաղթը շուտով չկատարվի, հայակեր Միջագետքը կուլ պիտի տա այդ մնացյալ փոքր հայությանը ևս»[41]։ Ներկայացնելով գաղթականության թշվառ վիճակը, Կաթողիկոսի դիվանն առաջարկում էր դաշնակցական կառավարությանը արագացնել նրանց ներգաղթի կազմակերպումը։ 1919 թ. հուլիսի 17-ին դաշնակցական կառավարությունը պատասխանում է էջմիածնին, որ «ներգաղթը առայժմ հնարավոր չէ, վասն որոյ կառավարությունը ուղարկում է Բաղդատ իր ներկայացուցիչը՝ նրանց դրությունը պարզելու»[42]։ Տեղի տալով արևմտահայ պառլամենտականների պահանջներին, դաշնակցական կառավարությունը ձևականորեն որոշում է ներկայացուցիչ ուղարկել «...Միջագետք՝ հոն գտնվող տառապակոծ գաղթականությանը Հայաստան փոխադրելու նպատակով»[43]։ Սակայն հենց այդ ներկայացուցչի հայտարարությամբ, դաշնակցական կառավարությունը միայն անվանապես 3 միլիոն ռուբլի քվեարկել տվեց ներգաղթին հատկացնելու համար։ Իրականում ոչ մի կոպեկ էլ չտրամադրվեց այդ գործին, և դա կատարվեց «տաճկահայ պատգամավորներուս, հետևաբար մեր ետևը կանգնած 400000 գաղթականությանը քնացնելու համար...» և ոչ թե իսկապես նրանց օգնելու[44]։

Օգնության մասին գաղթականության օրհասական կանչերին անտարբերությամբ վերաբերվեցին նաև Կ. Պոլսի հայկական պատրիարքարանը և ազգային-բարեգործական այլ կազմակերպությունները, իսկ Բաղդատում ստեղծված գաղթականների կոմիտեն անամոթաբար յուրացնում էր փախստականների ու որբերի անունով Հնդկաստանում, Ճավայում և այլուր հանգանակված գումարների մեծ մասը։

Այսպես, անխուսափելի կորստյան ճիրաններում գալարվում էր Միջագետքի հայ գաղթականությունը, երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգերը։ Այդ լուրը ցնծությամբ ընդունեցին միջագետքահայ աշխատավորները և վերակենդանացավ հայրենիք վերադառնալու նրանց հույսը։ Շու-

[41] ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 68/200, գ. 281, թ. 107։
[42] Նույն տեղում, թ. 108։
[43] «Երևան», երկօրյա թերթ, Փարիզ, 28 ապրիլի, 1929, № 498։
[44] Նույն տեղում։

տով նրանք կապվում են Պարսկաստանում ՌՍՖՍՌ լիազոր ներկայացուցչության, ապա նաև Սովետական Հայաստանի հետ։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը և Սովետական կառավարությունը, ծանոթանալով Միջագետքի հայության ծանր կացության հետ, անմիջապես միջոցներ են ձեռնարկում նրանց վիճակը բարելավելու, ինչպես նաև հայրենիք վերադարձնելու ուղղությամբ։

1921 թ. հուլիսի 2-ին Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը մի կոչով դիմում է Համադանի, Քիրմանշահի, Սուսուլի և Նահրէլօմարի հայ գաղթականական զանգվածներին, ուր նշվում էր, որ «ՀԿԿ-ը, ամենամեծ համակրանքով և նույնքան խորունկ վշտով, հետևում էր Ձեր գերմարդկային գողգոթային, անասելի տառապանքներին, որ կը տանիք ամբողջ երեք, երկա՜ր տարիներե՜ի վեր։

Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը, մինչև այսօր ամբողջապես կտրված ըլլալով Ձեզմե՝ չրսավ և չէր կարող ըսել իր պատմական խուքը՝ մինչև այն ատեն, երբ տակավին Հայաստանի և հայ աշխատավորության բախտը ձեռք բռնած ունեին ազգային բուրժուական կուսակցությունները

...Ձեռք առնելով Հայաստանի իշխանությունը—հայ գյուղացիության և աշխատավոր ժողովրդի կամքով, այժմ մեր առաջին աշխատանքների հետ միասին ձեռնարկում ենք նաև Ձեր տառապանքներուն այլևս միանգամայն ընդմիշտ վերջ տալու անխուսափելի և անհրաժեշտ պահանջին»[45]։

Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը գնահատելով ոչ հեռավոր անցյալի դեպքերը, և հայ ժողովրդին հասած աղետները, կոչ էր անում համայն աշխարհով մեկ ցրված հայությանը՝ վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան և նվիրվել շինարար աշխատանքի։

«Կոչ անելով վերադառնալ դեպի հայրենի երկիրը, ի խնդիր անոր շինարարության, ի խնդիր Ձեր աստանդական կյանքին, Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը պիտի ի գործ դնե իր բոլոր հնարավոր միջոցները, ապաստան տալու, վերաբնակեցնելու համար Ձեզի, գյուղերու թե քաղաքներու մեջ, պիտի տա իր բոլոր կարելի և անկարելի միջոցները, անելով իր լավագույն ճիգը՝ ընդառաջելու համար Ձեր կարիքներին, մինչև որ Դուք ևս իր հերթին կարողանաք նվիրվել մեր երկրի վերաշինության սրբազան գործին։

Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը, ղրկելով իր ներկա կոչ-դիմումը, կը գիտակցե իր անելիք աշխատանքի մեծության վրա, բայց և ան կը գիտակցի նաև իր պարտքի, պարտականության վրա, որ անհրաժեշտորեն կը ներկայանա իրեն և կը դառնա հերթական հարց»[46]։

Սովետական կառավարությանը լուրջ մտահոգություն էր պատճառում Միջագետքի հայ գաղթականության վիճակը։ Դեռևս 1921 թ. մարտին անգլիական իշխանությունները հայտարարել էին, որ ապրիլից գաղթականությանն այևս նյութական օգնություն ցույց չի տրվելու, այլ նրանք պետք է կապվեն հողի հետ, զբաղվեն հողագործությամբ և դրանով փող վաստակեն, որով իբր թե հնարավորություն կունենային վերադառնալու հայրենիք։ Հողին կապվելով գաղթականությունը պարտավոր էր 4—5 տարի ևս մնալ այնտեղ, բայց իրա-

---

[45] ՀՍՍՌ ՀԴԿՊԱ, ֆ. 4/114, գ. 89, թ. 38—39։

[46] Նույն տեղում։

կանում ոչ միայն 4—5, այլև տասը տարում էլ հնարավոր չէր այնքան գումար կուտակել, որ նրանք կարողանային սեփական միջոցներով հայրենիք վերադառնալ։ Հայերը ճիշտ են կռահում անգլիական գաղութարարների իսկական նպատակները և կտրականապես հրաժարվում են ցրվել Միջագետքի անապատներում ու կապվել հողին։

Միջագետքում այն ժամանակվա անգլիական Բարձրագույն Կոմիսար Ռ. Զ. Քոքսի՝ Գաղութների մինիստր Ուինստոն Չերչիլին ներկայացրած մի զեկուցագրից երևում է, որ 1921 թ. ամռանը որոշված է եղել Միջագետքում ցրել հայ գաղթականությանը՝ ամեն մի ընտանիքին տալով 65 ռուբլի, իսկ ամեն մի անձին՝ 13 ռուբլի 14 օրվա օրապահիկ։ Սակայն այդ ծրագիրը, Քոքսի ասելով, չհաջողվեց ամբողջությամբ գործադրել, որովհետև գաղթականները մերժեցին, թե օրապահիկն ստանալ և թե ճամբարների վրաններ քանդել։ Իսկ երբ անգլիական իշխանությունները հրավիրում են արաբ ոստիկաններ և փորձում նրանց օգնությամբ վրանները քանդել, Նահրէլոմարի քեմբերի ժողովուրդը դուրս է գալիս ու քարկոծում նրանց։

Այնուհետև զգալով, որ հայ տարագիրները երբեք էլ չեն թողնելու ճամբարը, անգլիացիները որոշում են նրանց ժամանակավորապես օգտագործել Աբադանի նավթահանքերում, բայց այդ պահանջը ևս հայերի կողմից մերժվում է։ Այն ժամանակ, անգլիացիները դիմում են մի այլ հրեշավոր միջոցի. վրանները վաճառում են տեղական արաբ վաշխառուներին և հայտարարում, որ այլևս 13 ռուբլի 14 օրվա օրապահիկը նույնպես չի տրվելու։ Կոմիսար Քոքսը, այս բոլորը նկարագրելով գաղութների մինիստրին, զգուշացնում է, որ անգամ հիվանդների պատճառով չի կարելի հապաղեցնել վրանների քանդումը[47]։

1921 թ. ամռանը Միջագետքի գաղթականության ներկայացուցիչները բանակցությունների մեջ են մտնում Թավրիզում գտնվող Սովետական Հայաստանի կառավարության Գաղթականական գործերի լիազոր Գր. Վարդանյանի, ինչպես նաև Երևան մեկնած իրենց պատվիրակների միջոցով ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի հետ և խնդրում շուտափույթ կերպով գաղթականությանը փոխադրել Հայաստան[48]։ 1921 թ. սեպտեմբերի 4-ին Միջագետքի հայ գաղթականության ներկայացուցիչ Ազատ Սիմոնյանը Սովետական կառավարությանը ներկայացնելով նրանց ծանր վիճակը, Թեհրանից գրում էր. «Մեր 12 հազարանոց գաղթականությունը, որ 7—8 տարիների բազմատեսակ տառապանքներին և տանջանքներին դիմագրաված է, ներկայիս հետին մտքերով ձգտում են (անգլիացիները—Հ. Մ.) կապել իրենց համար անհարազատ և օտար հողին՝ խեղդելով նրանց մեջ հայրենիք վերադառնալու իդեալը։

Ինաջնջումի նախօրյակին այս բազմաչարչար գաղթականությունը կսիրե հուսալ իր փրկությունը միայն իր հարազատ հայրենիքից։ Այժմ լիահույս ենք, որ Խորհրդային Հայաստանի Կառավարությունը ոչ մի զոհողության և դժվարության առաջ կանգ չի առնի փրկելու համար գաղթականության այդ բեկորները, տեղափոխելով Բասրայից դեպի հարազատ հայրենիք, որտեղ միայն հնարավորություն պիտի ունենան լծվելու խաղաղ և շինարար աշխատանքի»[49]։

---

[47] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 89, թ. 43—48։

[48] Նույն տեղում, ֆ. 114, գ. 207, թ. 122։

[49] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 5, թ. 61։

Սովետական կառավարությունը, ստանալով այս տեղեկությունները գաղթականության վիճակի մասին, Արտաքին Գործերի ժողկոմ Ասքանազ Մռավյանի ստորագրությամբ, 1921 թ. հոկտեմբերի 7-ին նոտայով դիմում է Անգլիայի արտաքին գործերի մինիստր Քերզոնին և առաջարկում միջոցներ ձեռք առնել գաղթականությանը Հայաստան փոխադրելու համար։

Նոտայում ասված էր. «Ստույգ տեղեկություններ առնելով Բաղդատի հայերից՝ Միջագետքի անգլիական իշխանություններից կախում ունեցող 14 հազար տարագիր գաղթականության վատթար վիճակի մասին, որը հետևանք է գաղթականությանը տրվող պետական նպաստի դադարեցմանը և նրա բռնի տեղահանմանը սկսած օգոստոսի 1-ից, սորանով պատիվ ունեմ դիմելու Ձեզ Հայաստանի Սոցիալիստական Խորհուրդային Հանրապետության կառավարության անունից հետևյալով.

Օգնության գործի դադարեցումը Միջագետքի անգլիական իշխանությունների կողմից փաստորեն համազոր է գաղթականությանը մահվան դատապարտելուն։ Այն տարերային ու աղետաբեր գաղթը, որին ճարահատյալ դիմել են այսօր հայ գաղթականները Բասրայի անհամբույր շրջավայրերից, որտեղ նրանց ներփակել են անգլիական տեղական իշխանությունները, մղում նրանց սովի, համաճարակ հիվանդությունների և մահվան գիրկը։ Եվ հազիվ թե այդ 14 հազար տառապող ժողովրդից ազատվեն մի քանի խղճուկ բեկորներ»[30]։

Նկարագրելով հայ տարագիրների նկատմամբ անգլիական գաղութարարների վարած քաղաքականության հետևանքով առաջացած ողբերգական ծանր վիճակը, Սովետական Հայաստանի Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիսարն առաջարկում էր Անգլիայի Արտաքին Գործերի Մինիստրին՝ համապատասխան կարգադրություն անել անգլիական իշխանություններին, որպեսզի դադարեցվեն գաղթականությանը Միջագետքում ցրելու և նրանց համար օտար ու անհարազատ հողին կապելու ուղղությամբ կատարվող ձեռնարկումները և շարունակվի նրանց օգնության գործը։

«Այդ գործը,—այնուհետև շարունակվում է նոտայում,—կարող է կատարել և պարտական է անել Բրիտանիայի ներկա կառավարությունը, որը մինչև այսօր կապված է եղել վերոհիշյալ հայ գաղթականական զանգվածի հետ։ Իսկ եթե Բրիտանիայի կառավարությունը հրաժարվի ստանձնել իր վրա այդ դժբախտ գաղթականների հոգացողությունը, կխնդրեի գեթ կատարել նրանց վերջին իղձը և միջոցներ ձեռք առնել նրանց տեղափոխելու Պոլսի վրայով դեպի Բաթում, որպեսզի Հայաստանի կառավարությունը հնարավորություն ունենա տեղավորել նրանց իր սահմաններում»[31]։

Սովետական կառավարության ձեռք առած վճռական միջոցների շնորհիվ և հասարակական կարծիքի ճնշման տակ անգլիական իշխանությունները ստիպված համաձայնվեցին Միջագետքի գաղթականներին նավերով հասցնել Բաթում։ 1921 թ. դեկտեմբերի 13-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահությունը քննարկում է Միջագետքից Հայաստան ժամանող 3000 գաղթականներին ընդունելու հարցը և որոշում է հանձնարարել Հողագործության Ժողովրդական Կոմիսար Արամայիս Երզնկյանին՝ շտապ միջոցներ ձեռք առնելու նրանց Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական), Ջալալ օղլու (այժմ Ստեփանավան) և այլ շրջաններում բնակեցնելու, հողով ապահովելու և նյութական

[30] Նույն տեղում, ֆ. 114, գ. 97, թ. 7։
[31] Նույն տեղում։

լայն աջակցություն ցույց տալու ուղղությամբ[52]։ 1921 թ. դեկտեմբերի 20-ին Վրաստանում ՀՍԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հ. Սուրխաթյանը Թիֆլիսից հեռագրում է Ժողկոմխորհին, որ արդեն Բաթում է հասել շոգենավը Միջագետքի մոտ 3000 գաղթականներով[53]։ Այդ խմբի մեծ մասը տեղավորվում է Ալեքսանդրապոլի, Բասարգեչարի և Ղամարլուի շրջաններում[54]։

Նկատի առնելով Հայաստանի այն ժամանակվա տնտեսական ծանր պայմանները, բնակարանների ու կենսամթերքների պակասը, պիտի ասել, որ Սովետական կառավարության այդ քայլը գաղութահայ աշխատավորության նկատմամբ ցուցաբերած վառ հոգատարության մի ակտ էր, որը կատարվում էր Միջագետքի անապատներում անխուսափելի ոչնչացման դատապարտված ժողովրդի կյանքը փրկելու համար։

Հակառակ գոյություն ունեցող նախորոք մշակված համաձայնությանը, որպեսզի Սովետական կառավարության նկատմամբ դժգոհություն առաջացնեն ներգաղթողների մեջ, անգլիական իշխանությունները որոշում են Միջագետքի հայ գաղթականների փոխադրությունը մինչև Բաթում կատարել հենց ձմեռվա ամիսների ընթացքում, երբ էլ ավելի դժվար կլիներ հոգալ նրանց բազմատեսակ կարիքները։

1921 թ. դեկտեմբերի 27-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհը կրկին քննարկում է միջագետքահայերի ընդունելության հարցը և որոշում է ձմեռվա ամիսներին միանգամայն հնարավորություններից դուրս համարել գաղթականներին Հայաստան ընդունելը, հավանություն տալ Արտգործժողկոմատի քայլերին՝ մինչև 1922 թ. գարունը ներգաղթ չկատարելու ուղղությամբ և խնդրել Սովետական Ռուսաստանի կառավարությանը՝ Թեհրանի իր դիվանագիտական ներկայացուցչության միջոցով գաղթականությանը ցույց տալ նյութական օգնություն, մինչև որ գարնանը փոխադրվի Հայաստան։ Նույն օրը Արտգործժողկոմ Ա. Մռավյանը նոտայով դիմում է Անգլիայի Արտաքին գործերի մինիստր Քերզոնին։ Այդ նոտայում նշվում էր, որ ՀՍԽՀ կառավարությանը հայտնի է դարձել, որ արդեն սպասվում է Միջագետքի 7000 գաղթականների մուտքը Բաթում, մի բան, որը անհնարին է ընդունել ներկայումս։ Սովետական կառավարությունն ընդունելով միջագետքահայ գաղթականության 3000 հոգուց բաղկացած առաջին խմբին, միաժամանակ Բրիտանական կառավարությանը նախազգուշացրեց այն մասին, որ նկատի ունենալով տրանսպորտի բացակայությունը և ձմեռային եղանակները, բնակարանների սղությունը՝ մեծ թվով գաղթականության համար, նպատակահարմար է դադարեցնել գաղթականության փոխադրությունը մինչև 1922 թ. ապրիլը և այնուհետև տեղափոխել ավելի փոքր խմբերով, հազար հոգուց ոչ ավելի ամեն խմբում, ամսական մեկ անգամ։ Արտգործժողկոմատը հայտնելով այդ մասին, կրկին դիմում է Բրիտանական կառավարությանը դադարեցնելու գաղթականության տեղափոխությունը և շարունակելու ցույց տալ նյութական օգնություն՝ մինչև 1922 թ. ապրիլ ամիսը[56]։

[52] Նույն տեղում, ֆ. 40/113, գ. 3, գ. 25, թ. 56։
[53] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 96, թ. 631։
[54] Նույն տեղում, թ. 641։
[55] Նույն տեղում, ֆ. 40/113, գ. գ. 25, թ. 60։
[56] Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 51, թ. 113։

Սակայն հաշվի չառնելով այդ դժվարությունները, անգլիական իշխանությունները հապճեպորեն իրագործում են իրենց որոշումը, այն էլ այնպիսի շտապողականությամբ, որ ինչպես պատմում են ականատեսները, պատահում էր, որ ծնողները նավ էին նստում, իսկ երեխաները մնում էին, կամ ամուսիններից մեկը մնում էր, մյուսը՝ նավ նստում[57]։ 1922 թ. հունվարի 2-ին ՀՍԽՀ Արտգործժողկոմատը մի հուշագիր է ուղարկում Կ. Պոլսում Բրիտանական Դերագույն Կոմիսարին, որտեղ նշվում է, որ Սովետական Հայաստանի կառավարությունը մինչև 1922 թ. ապրիլը ի վիճակի չէ Միջագետքի հայերին երկիր ընդունել բնակարանների և անհրաժեշտ այլ միջոցների պակասության պատճառով։ Չնայած դրան, քանի որ նրանք արդեն գտնվում են ճանապարհին, ուստի կընդունվեն, բայց այդտեղից բխող բոլոր բարդությունների ամբողջ պատասխանատվությունը պետք է ընկնի անգլիական կառավարության վրա[58]։

1922 թ. հունվարի 10-ին Բաթում է ժամանում Միջագետքի գաղթականության մոտ 3000 մարդուց բաղկացած երկրորդ քարավանը, որին ընդունելու և տեղավորելու համար Սովետական կառավարությունը ձեռք է առնում արտակարգ միջոցներ։ Այդ խմբում ներգաղթածների զգալի մասը ժամանակավորապես տեղավորվում է Ղամարլուի շրջանում գտնվող զորանոցներում, որպեսզի գարնանը տեղափոխվի Վեգի[59]։

Չնայած բազմատեսակ կարիքներին, բոլոր ներգաղթածներն էլ գոհ և ուրախ էին, որ երկարատև դեգերումներից ու անլուր զրկանքներից հետո, բախտ ունեցան իրենց օջախները վերստեղծելու հայրենի հողի վրա։

Միջագետքի և Պարսկաստանի հայ գաղթականությանը Արևելքի երկրներում շրջվելու և հայրենիք վերադարձնելու գործում լուրջ օգնություն ցույց տվեց Սովետական Ռուսաստանի կառավարությունը Թեհրանի իր դիվանագիտական ներկայացուցչության միջոցով[60]։

Միջագետքի հայ գաղթականները առաջիններից մեկն էին սփյուռքահայ բազմահազար այն աշխատավորներից, որոնք կարողացան վերադառնալ հայության նոր, շահագործումից ազատագրված սոցիալիստական հայրենիքը, ուր տիրում էր սոցիալական ու քաղաքական իսկական իրավահավասարություն և տարբեր ազգերի եղբայրական համերաշխություն։ Վեդիում տեղավորված միջագետքահայ գաղթականներին 1922 թ. ամռանը այցելած մի ականատես գրում էր, թե «գուցե տարօրինակ երևույթ նկատվի այն համերաշխ կենցաղը, որ ներկայիս գոյություն ունի անհաշտելի նկատված այդ երկու տարրերի՝ տեղական Թուրքերի (այսինքն ադրբեջանցիների—Հ. Մ.) և վերաբնակ հայ գաղթականների միջև, բայց և այնպես ներկա մոմենտում նա փաստ է, մի կարկառուն փաստ, որ գալիս է միանգամ ևս գնահատելի դարձնելու որ միայն Խորհրդային իշխանությունը ընդունակ է հաշտեցնելու տարբեր լեզուների ու կրոնների աշխատավորներին»[61]։

Ներգաղթողներին ինչպես ճանապարհին, այնպես էլ երկրում տեղավորելուց հետո, Սովետական կառավարության և տեղական իշխանությունների ու աշխատավորների կողմից, ցույց էր տրվում լայն օգնություն։ Նրանք օգտը-

[57] «Խորհրդային Հայաստան», 25 սեպտեմբերի, 1924, № 219։
[58] ՀՍՍՌ ՀԴԿՊԱ. ֆ. 4/114, գ. 96, թ. 748։
[59] Նույն տեղում, գ. 5, թ. 78։
[60] Նույն տեղում, գ. 16, թ. 89։
[61] «Խորհրդային Հայաստան», 5 սեպտեմբերի, 1922, № 200։

վում էին առանց մաքսերի ու տուրքերի մեծ չափերի հասնող բեռների ձրի փոխադրության իրավունքից, ստանում էին ձրի բժշկական օգնություն և այլն[62]։ Այնտեղ, ուր նրանք մշտական բնակություն էին հաստատում, տրվում էր անհրաժեշտ քանակությամբ հող, լծկաններ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, բնակարաններ, վարկեր, շինանյութեր և այլ միջոցներ։

Միջագետքում մնացած հայ գաղթականության մեծ մասը Սովետական Հայաստան վերադարձավ հաջորդ տարիներին և նույնպես հնարավորություններ ստացավ կարճ ժամանակամիջոցում թոթափելու իր կրած տառապանքների փոշին ու կապվելու երկրի վերաշինության գործին[63]։

Այսպիսով, Վասպուրականի, Սալմաստի, Ուրմիայի, Խոյի և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այլ վայրերից Միջագետքում կուտակված հայ գաղթականության մեծ մասը՝ ավելի քան 9000 մարդ, Բաթումով և Ջուլֆայով Սովետական Հայաստան ներգաղթեց 1921 թ. վերջերին և 1922 թ. սկզբներին։ Նրանք տեղավորվեցին հիմնականում Վեդու, Բասարգեչարի, Ալեքսանդրապոլի և Վամարլուի շրջաններում[64]։

Սփյուռքահայ աշխատավորները, որոնք սևեռուն հայացքներով անընդհատ հետևում էին Սովետական Հայաստանի վերաշինությանը, տեսնելով նաև իրենց գաղութահայ եղբայրների քաղաքական լիիրավ վիճակն ու օրեցօր բարելավվող նյութական բարեկեցությունը երկրում, ձգտում էին նույնպես վերադառնալ հայրենիք։ Սովետական կառավարությունը նրանց այդ բաղձանքների իրականացմանը լայնորեն ձեռնամուխ եղավ հետագա տարիներին։

---

[62] ՀՍՍՌ ՀԴԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 374, թ. 18։

[63] Նույն տեղում, տե՛ս գգ. 297, 377 և այլն։

[64] Տե՛ս «Խորհրդային Հայաստան—1920—1925», ժողովածու, Երևան, 1926, էջ 69,